

ՆՈՒՐ ԿՈՎԱՆԵԱՆ

ՆՈՐ ԻՍՐԱՅԵԼԻ  
ՍԱՂՄՈՍՆԵՐ

Տաճկական ուղարկման

Օվ. Կոտային  
Պсалмы Нового Израиля  
Баку, тип. „Трудъ“ 1909.

891.99


4-75

19 NOV  
19 NOV 2011

ՀՀԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

142. ԿՈՍՏԱՆԵԱՆ

ՆՈՐ ԻՄՐԱՅԵԼԻ ՍԱՂՄՈՎԱՆԵՐ



ԲՈԳՈՒ, ՏՊԱՐԱՆ  
„ՏՐՈՒԴ” 1909 թ.

„ՍԱՂՄՈՍՆԵՐ“ ՆՈՒԻՐՈՒՄ ԵՄ  
Ա.Դ.Ա.Ն.Ա.Ց.Ի Ն.Ա.Հ.Ա.Տ.Ա.Կ.Ն.Ե.Ր.Ի  
**ՅԻՇԱՏԱԿԻՆ**

Մի՛ բողնիր կորչին—բնաշինց լիճին նրանց վառ ջանիր,  
Մի՛ բողնիր անքին նահատակներիդ արիւններն աննետ,  
Որ ու սահարիդ արեւի համար բափեցին նրանի—  
Ասուա՛ծ յաւիտեամ, Ասուա՛ծ հեմարիս, Ասուա՛ծ դատաւոր...

Եկել թնկե՛լ ենի սահարիդ առաջ—աւե՛ր, բարուխա՞նդ,  
Հողն ենի համբուռում, Սիրոյ սահարիդ հողն արիւնս.  
Մենի աղաչում ենի. եղի՛ր իմացող, Գու եղիր յու՞զ  
Մեղալից մարդու սրառուչ խօսին, սրառուչ ձայնին.—

Նահատակներիդ պար մարմինները մենի չամփոփեցինն,  
Նրանց արիւնը երկիրը ծրծեց, արեւը չորացուց.—  
Տո՛ր նրանց հոգին—անմեղ սաւառնեն ատզերի շարբամ,  
Անազարտ երկնի՛ր եւ համարտարեան զի՞նչ սահմաններում...

Եւ բափե՛ վերից, բափէ կայծակնե՛ր, ու հո՛ւրը-բորբոն,  
Չարիի՛ բայնը այրէ՛, հո՞զ-դարձուր—Ասուա՛ծ Սարաւոր...



4000 - 84

ՄԱՀՈՒԱՆ ՍՏՈՒԵՐՆԵՐ

# I

Հարաւից յարձակուող մռիկների  
պէս՝ նա անսպասից, սոսկալի եր-  
կրից է զալիս...                                    Եսյ.

Ա՛խ, արուն-քամի՛, ա՛խ, արուն-քամի՛,  
Ա՛խ, սիրս ինչո՞ւ զարկեցիր զամի.  
Կոռնաս այս զիւեր, ինչպէս մի չախալ,  
Ասում ես՝ «հայ մարդ, մքնաւ ու աշխարհ...»

Ա՛խ, արուն-քամի՛, ա՛խ, արուն-քամի՛,  
Ա՛խ, սիրս ինչո՞ւ զարկեցիր զամի.  
Եւ արար աշխարհ լցրեցիր բօրով,  
Արեան ու մահուան հեղձուկո՞վ, սօրո՞վ...

Վա՛խ, մարդն է մեռնում արդար ու անմեղ,  
Հո՛ւնձերն են խանձուր, հո՛ւնձն արիւնահեղ,  
Եւ դո՛ւ լալականչ կլ վայես գլխիս,  
Կրիաչես, կ'ոռնաս,— կրփակես ուզիս...

Ա՛խ, արուն-քամի՛, ո՞րտեղից եկար,  
Ո՞ր ժնշաւորը ուղարկեց աշխարհ,  
Ո՞ր բարձունեներից իջար դեպի դաւս,  
Ինչո՞ւ խառնեցիր ժողովուրդներ հաւս...

Թէ՛ դու բնածին մի դաժան չարիք—  
Ախտածես նիւթով սեւցուցիր բարիք,  
Թէ՛ դու— վերեւից իբրև մի պատիճ—  
Թունաւորեցիր մարդուն, ոռպէս իժ...;

Ա՛յս, արուն-քամի՛, ա՛յս, արուն-քամի՛,  
Ա՛յս, սիրս ինչո՞ւ զարկեցիր զամի...;

## II

Ինձ մի սոսկալի տեսիլք յայտեց, յափօսակողը յափօսակում է  
Էլործանողը լործանում է: Եսյ.

Մոա՛լ է հոգիս, զերք աշնան այերք,  
Տիսո՛ւր է, տրտո՛ւմ ժողովրդիս երգ...  
Կանգնած եմ ապո՛ւս—զլո՞ւմ եմ իմ կանչ,  
Զարատանջ ազգի որդիս չարատանջ...

Դո՛ւք, մեծ հայրերի տարաբաղդ որդիի,  
Վայրազ ուժերի դարձել էֆ խորտիկ,  
Դո՛ւք, փառքի, անուան, մեծութեան սերունդ,  
Լափող վաւերի եղել էֆ սնունդ...

Դո՛ւք, հայրենիիս ուժեղ ներսներ,  
Ծաղիկների պէս ինչո՞ւ եֆ քօնել,  
Եւ ահա՛ վիաս, զլո՞ւխս մոխիր,  
Ես արուն-արուն սզում եմ ոնիր...

Ահա՛ երկինքն է ծխի, մխի մհջ,  
Կրակէ լեզուներ նալրում են հեծ-հեծ,  
Հրեղէն յորձանեք, ալիբներ բոցի  
Մարդկանց փարքել են մհջն իրենց ծոցի...

Ճւում է մայրը, մանուկը գրկում,  
Հեծում են ծերեր, իւսուր են գրկում...  
Մի ակնբարբում լուում է ամեն—  
Զկա՞ն էլ մարդիք... վառւում, այրւո՞ւմ են...

Զկա՞յ տանտիրոջ բերքն աշխատանքի,  
Կայլե՛րը, ինչքը—սիւնե՛րը կեանի,  
Զկա՞ն եղբարբներ, մորքե՛լ են այսօր,  
Կի՞նը, որդի՛քը վառուան ինչպէս ուր...

Զկա՞յ եւ ինքը—տեր-տիրական.  
Նրան պատուեցին ինչպէս մի զազան—  
Նրանց փոխարէն լեզուք գեհենի  
Զգում են երկինք—տուած ձեն-ձենի...

Ա՛յս, արուն-քամի՛, ա՛յս, արուն-քամի՛,  
Ա՛յս, սիրս ինչո՞ւ զարկեցիր զամի...

## III

Ճանապարհորդը շապամ է տուն  
Եւ սրտառով սպասում է նա—  
Կնոջը, որդոց կրզրկէ խսկոյն  
Եւ դարձեալ իրեն գործին կրզնայ...

Այնտեղ նա ունի կայք ու կալուածներ,  
Փառաւոր կայան, բազում բանուորներ,  
Այնտեղ նա ունի նոխ հարստորիւն.  
Բայց, Ասուա՛ծ... այնտեղ նրդեհն է լափում...

Կատաղի վաւեր, զելողներ վայրի  
Մորքում են, այրում մատադ եւ այրի,

Առեւանգում են մատադիս կանանց,  
Յօշտում մարդկանց, բալանում են զանձ...

Ահա՝ ճամբորդը տեսաւ ծանօթին—  
Տանիցն եր զայխս—իրեն երկրացին,  
Նրան հարցեց ունչը կտրուած。  
—Գնո՞ւմ եմ... ի՞նչ կայ... ո՞ղջ են անկասկած...

—Գնո՞ւմ ես, ինչո՞ւ եւ որի համար.  
Կայերդ չկա՞ն—եղան բոցահար,  
Եսի թէ գնում ես որդոցդ տեսնես,  
Զպարկին գնտակ, ա'լ արին կես-կես...

—Թէ մօ՞րդ կուզես—պառաւ, զառամած,  
Անեղ սարսափից վար ընկաւ յանկարձ...  
Կնո՞ջդ կուզես, տեսնե՞ս ո՞ւ կնոջ,  
Իմ աչքի առջեւ զցեցին հնոց...

— Աղջիկդ սիրուն, աղջիկդ նունուց  
Թշնամին սարաւ, որ անէ անոււ...  
Գնում ես ինչո՞ւ եւ որի՞ համար,  
Շունչդ ժողովի՛, յես դարձի՛ր, եղբա՛յր...

Նայում է երկար—ակնապի՛շ, խուռվ,  
Դեմքը սեւենած ճամբորդն է նայում,  
Եւ վերջը մի սուր նիշ արձակիլով,  
Դեմին զլորուեց—արո՞ւն ու արո՞ւն...

Ա՛յս, արո՞ւն-քամի, ա՛յս, արո՞ւն-քամի,  
Ա՛յս, սիրս ինչո՞ւ զարկեցիր զամի...



IV

Երկիրը կրսպայ ու կրմարի. առ-  
խարհը կրնուադի ու կրմարի: Եսյ.

Ես տեսայ տո՞նը, հրդեհուած տո՞նը  
Եւ հարիւրաւոր անմեղներ այնեեղ...  
Ա՛յս, երէ հասներ նրանց «փրկութիւնը»—  
Լուսանցից, դռնից փախչէին մի տեղ.

Դո՞ւ, պահապաններ—հրացաններն ուղղած,  
Կեա՞նք խնդրողներին՝ մա՞ն եիք տալիս,  
Եւ բափուո՞ւմ եին, բափուո՞ւմ եին վար  
Մարդիք ինչպէս որս... եւ նոզիս լալի՞ս...

Ես տեսայ մանո՞ւկ—միայնա՞կ մանուկ,  
Նա տոն էր դառնում ուսումնարանից,  
Տաֆ զնտակներից ընկաւ նա բարուկ—  
Մայրն առմիւս կարօս մնաց նրանից...

Ես ոնի՛ր տեսայ—ահե՛ղ ոնիրներ,  
Սարսափե՛ց, բնդաց նոզի՞ս ամենի,  
Մա՞րդն ընկաւ աչքի՞ցս... մարդու արարքներ—  
Այլանդա՞կ, զազի՛ր եւ բամբնելի՛...

Ո՞վ մեռնողներից առնում է վրէծ,  
Հանգած աչերին զարկում է մեխեր,  
Լողացնում նրան տաֆ արիւնի մեջ,  
Ո՞վ է կտրատում մեռնողի մսեր...

Բոնաբարո՞ւմ են եւ մեռած կանանց,  
Ճեղքո՞ւմ որովայն, հանո՞ւմ մանուկին,

Եւ տկի ծայրին շամփրելով անսանձ—  
Ծաղրում, խաղացնում անմեղ խնդուկին...

Այս անպատճենն ո՞վ, ո՞վ կըտանի,  
Եւ միքէ, իրաւ, մեռել է խիճճր...  
Ոճիրներ անչափ—չարիբներ բանի—  
Եւ միքէ, ո՞վ մարդ, բոնն է այդ իդար...

Անօտենց թեկածին ո՞վ կ'անէ քարկոծ,  
Զախշախում զլուխը եւ ցռում ուղեղ,  
Սովորով ծակում, որ բացուին վերք, խոց,  
Քարշ-քարշ տանում զոհերին անմետ...

Սբափոխի՛ր, ո՞վ մարդ, անեղ դատաստան  
Եւ արդարութեան «կչեռքը» միտք քե՛ր,  
Այնտեղ դու, դու ես ասլու պատասխան,  
Խի՛ դնի ե, որ այնտեղ բննում է դատեր:

Արքացիք, ով մարդ, եւ հարց տուր դու քեզ,  
Ուր, ուր կըտանի կոխւն այս բասիր,  
Այս եղբայրասպան, մահանոս այս ծես.  
Սրափուիք, ով մարդ, սրափուիք, սրափուիք

V

Եւ ահա գրկուածներու աշխը ար-  
սասով կար եւ բասօն միխթառող  
չունիին: Գիրք Փ.

Զօների ձայները լսեցի՞ ի՞նչ արի,  
Դուք, մեծաբարբառ աշխարհի որդիկ,  
Եթ մենք՝ մոլորուած, զիսակոր, տրում,  
Նայում էինք մեր տաճ սեւ-մութ պատերուն.

Մեր տան աներդիկ—այրուած ու սեւ տան,  
Եր աղջկեներ իրենց ամօրից  
Անկիւններ փախչում—խոս էին ուսում,  
Ինչպէս անասուն, ինչպէս մի անբան:

Դուք տեսա՞մ ինչպես պոկեցին ինձնից  
իմ զարուն—արուն աղջկան Գոհար,  
Եւ բաշխածելով տարան իմ տեից—  
Մի կրտս, լալիր գիշերուան համար...

Դուք տեսա՞մ մատաղ, բան տարեկան  
իմ միակ որդուն պարանով կապած,  
Աչիս առաջեն ծեծելով տարան,  
Ուր տարան զփեսեմ, զիսէ մեկ Աստուած...

Զկա՞յ իմ որդին - կենդանի՞ քաղուած,  
Խակ իմ հօրական, փառաւոր տունը  
Փլուա՞ծ, բայխայուա՞ծ, հսդին հաւասար,  
Հաւէք բուն ունի - չկա՞յ իմ բունի:

Եթ չհաւատացինք աշխարհի խօսքին—  
Ասացի՞ն «կրակը մեռել է ձեր մէջ  
Սորկութիւնից—ձեր կուռքն է ոսկին»。  
Եթ հաւատացինք—մեր պիտը լին:

Եւ ծով-կեանիք մեջ—մարդու զարմն ուժեղ՝  
Հին-հին դարերի՝ տեղ չունի հիմա  
Նսի, ունչ բաշ, — հիմա հացի տեղ՝  
Այս ի աշխարհում խոս է ուսում նա...

Դռւ որ չե՞ք տեսել—լսել եք միայն—  
Հանգիս եք—հեֆիաք բրում է այդ ձեզ,  
Ապա՛, մեկ անգամ լսեցի՞ք հրացա՞ն,  
Եւ արեան գետեր բող փարաքեն ձե՛ զ...

VI

Մահուան դրները բացուեցին  
Բո տաղ և մահուան սուեների  
Դրները տեսար:

38.

Խոր, սասփի ձմե՞ռ... Խո՞րին լոռիքիւն...  
Եւ համարած դաշ ու անդասան,  
Լեռներ ու ձորեր պարփակել է ձիւն,  
Եւ սառնամանիք օդն ու տափաստան...

Ահա՛ շարժում է անծայր դաշի մեջ  
Վհուկը մենակ, վհուկը մահի,  
Նրա դեմքը սեւ—մութ գիշերուայ պկս,  
Քայլե՞րն սարսափ—եւ ոռունչն ահի...

Եւ հետեւում են նրա շատիզով  
Լուռ վիհմակները սոված զայլերի,  
Բի՞ւր, հազարառ՝ սեւ-սեւ խմբերով,  
Եւ հետեւում է կարափանի վայրի...

Վհո՞ւկն է նեմում—Այդ մա՞նն է նեմում  
Իրեն զօրերով ձմռան դաշերում,  
Թռչուննե՞ր—հաւենե՞ր ձեան մեջ բափրափիւում—  
Վհուկի շնչից նետահարուելով...

Եւ նեմո՞ւմ է նա... Խո՞ր, սասփի ձմեռ...  
Լուռ վիհմակները բաղցած զայլերի  
Հետեւում նրան բայզով անտարեր—  
Ամայի՛, անտո՞ւնչ ձիւներում վայրի...

ՎԵՐԱԶԱՐԹՆՈՒՄԻ ՏՐՏՈՒՆՁՆԵՐ

## Կ Ա 2

Ահա ես ձեր առաջ եմ դմում  
կետնի նահապարհը եւ մահ-  
ուան նահապարհը: Երմ.

Եւ կոչ եմ կարդում—կոչ սրբագին,  
Քեզ կոչ եմ կարդում, հայոց ժողովուրդ.  
Մահի, սարսափի հազուս եւ հազին,  
Դու զարկուած, գրկուած—եղել ջարդ ու բռւրդ.

Դու ամբ սիրտդ հեռու ես փախչում—  
Օսար երկիրներ, վայրեր հեռաւոր,  
Քո բռւնդ բողած—օսար ծոց քաշում,  
Դու, մեծ հայրերի սերունդ փառաւոր...

Եւ ո՞ւմ ես բողնում Ազա՛տն—Մասիս,  
Արազած լեռդ, Սիւնիքն ու Սասուն,  
Սուրբ Էջմիածին, Մայր-Արաքսն ու Սիս,  
Ա՛յս, ո՞ւր ես բողնում, դու ո՞ւմ ես բողնում...

Եւ օսար ափե՛ր, սարօրէն ափե՛ր  
Քո հայրենիքից տարւում ես հոգմով,  
Իմ մեծ ժողովուրդ, այնտեղ դու անէք—  
Աշխարհի ծովում կրկլուխ ուժով:



1900 - 84

Ո՛, արի՛, դու եկ, կպի՛ր քո բնիդ,  
Հարազա՞ս հողի սրտին դու կպի՛ր,  
Տուն քե՛ր քո որդոց, ուժ տուր քո շենիդ,  
Օջախոյ վառէ՛, օօախսիդ հապուհի՛ր...

Եւ կո՞չ եմ կարդում, եւ կո՞չ եմ կարդում,  
Քեզ կոչ եմ կարդում, ժողովուրդ հայոց,  
Դու կանգնի՛ր կանգուն, դու եղի՛ր արքուն,  
Եւ սրտի սեղմէ ք հին օրօրոց...

II

Ո՞վ ենց պիտի ցաւի. կործանում  
ու կոսորած. սովու սուր. ենց ին-  
չո՞վ մխիթարէմ: Ես ա.

Երբ սրանմիկ ողբի սուր ձայներ  
Քո լսելիքին հասնում են արագ,  
Եւ ահա տիտուր, սպալի պատկեր  
Աշերիդ առջեւ,— երդեհի՝ հարախ...

Տեսնում ես զիւղը—մի վայրկեան առաջ  
Բնակիչներով խաղաղ եւ արդար  
Կեանք եին վարում եւ օրհնում Աստուած—  
Անեղ բոցի մէջ ու սարսափիանար

Խանձուած ու այրուած տուերով, դեմքով,  
Եր կրծին սեղմած կարնասուն մանկան,  
Մայրն աղաչում է, լալիս և հեւերով,  
Բայց չի ազատում ոչ ինք, ոչ սուն

Եւ ահա՞ նչի, լաց ու կոծի հետ՝  
Ս.նասունների մայն ու բառաշխիւն,  
Ս.նա՞ մի վայրկեսան—եւ եղաւ անհետ  
Բանական մարդը, ինչպէս անասուն.

Այսեղ է, այսեղ սուր Տէղի ծայրին  
Մանուկը կալտառ, երբ լիդ մի կին  
Փախառ հրդեհից—եւղթեցին փորք—  
Եւ Տէղի ծայրին է մանկան օօօր...

Երբ աղքան, անտեր խելդուում են կեանից,  
Եւ մարդու որդին, ինչպէս մի երե,  
Միւս հալածուած է անզուր որսորդից—  
Չունի մի անկիւն—հանգչի, ռունչ հաշ.—

Հարցմունիք ես ասիս այդ ժամին դժուար.  
Ո՞վ, ո՞վ կրիասնի այդ ծողովրդին,  
Որ սովորենք դառն ըստին  
Մի կաթի զուր տայ փրկութեան համար...

Հանգի, ուսից հայ աշխարհի վրայ  
եւ հոգին զգայ ազատ գոյութիւն,  
Վերասին ծնուի՛ կեանեով ապագայ—  
Հեռո՛ւ նրանից այս սոսկ գերութիւն...

三

Կապուածը շուտով պիտի արձակ-  
ուի եւ զուփի մեջ չպիտի մեռնի...  
Ես.

Դու կոզե՞ս տեսնել արտառնիների  
Հնաւանդ երկիր, հալածանիների  
Նոր սրբավայրեր, —կամենա՞ս նայել  
Բիրս սահշանիների, սոսկանի պատեր,

Խաչ արիւնլուայ եւ նոր Գողգորան,  
 Ուր բարձրացրին ժողովուրդն ամբողջ...  
 Նա կսկիծի մէջ կանչեց բարձրաձայն՝  
 «Ո՛, Սասուած, ինչո՞ւ դու ինձ բողիր ողջ»:  
 Նոր Գողգորայի նոր խաչի վրան  
 Ժողովուրդն անպատ երբ որ մեռնում էր—  
 Խաւարե՛ց արեւ. սոսկումից մահուան  
 Երկիրը շարժե՛ց իր խոր անդունդներ.  
 Զբեր ցամքեցի՛ն, խորտակուան լեռնե՛ր,  
 Կործանուեց տաճա՛ր... եւ սրբութիւննե՛ր...  
 Աշխարհն անհոգ—լուս էր, տեսնում,  
 Եւ պատմունանը վիճակ են զցում,  
 Գերեզման փռում... Կարնատեսութեան  
 Ցաւը բռնել է ամբողջ մարդկութեան.  
 Նա մոռացել է, նա անգիտացել,  
 Որ մէկ օր կ'ելնի՝ մեռածը կենդանի.  
 Ո՛չ կեղծ աշխարհի կարով, արիւնով  
 Մնուած, զօրացած մէկ օր կ'ելնի վեր,  
 Ո՛չ նրա գրկից՝ փարքամ, նենգացած—  
 Այլ գերեզմանի՛, սոսկ գերեզմանի  
 Անհուն խորենի՛ց—իր հայրենիից,  
 Ուր նա կայ վաղուց կենդանի՛ բաղուած...  
 Նա մէկ օր կ'ելնի՝ արտասունների,  
 Հառաչանքների եւ չիրիմնների  
 Զոհն անկենդան —խաչը վեր հանած  
 Գողգորայի վրայ—այնտեղ՝ ուր հիմա  
 Մարդը չի ապրում, մարդն է մեռած...



### III

Մունչ եղայ ու բերանս չբացի:  
Սդմ.

«Մի՛ գոռար—բող նո բերանդ բռնեն,  
 Մի՛ լար, մի՛ խնդրիր—բող նեզ կտրատեն,  
 Մի՛ կանչիր—խեղդեն նո բկից բռնած,  
 Ականչ, միր բերան սրով յօւսած...

Մի՛ արդարանար,—նո բնտանիքը,  
 Կինդ, որդիքդ—ջարդուին, փշուին,  
 Զուր մի՛ ալօրիր այդ արհաւիրքը  
 Սասուած է ուղարկել—իմանան, տեսնեն...

Բայց արիւն դարձաւ դաւս ու անդասան,  
 Երկինք ցայտեցին արեան կարիլներ,  
 Ասուա՛ծ, կուզեկի՛ր—մարդի իմացան,  
 Ո՞ւր ես հոսուցնում արեան նեղեններ...

Քեզ են բողոքում—ամենազէս ես,  
 Ինչո՞ւ չես բափում նո՞ւր—շանքերը,  
 Վրեժի, ոխի Ասուա՛ծ. ապա՛ տես,  
 Ողջ չորացել են մարդկանց սրսեր...

«Էլի՛ կախ զցիր զլուխդ—զարկեն,  
 Կացինով զարկեն—բռչի զլուխդ,  
 Էլի՛ խեղբռուիր մինչ վերջին ռոպէն,  
 Բռնի՛ր, մի՛ բողնիր իմացուի ոււնչդ...

Կտրատեն—մի՛ լար, ծակծակեն—լոի՛ր,  
 Գոհացի՛ր, շնորհի՛ր սրտիդ իղձերը,  
 Ողջ տնով, տեղով դու արիւն դարձիր,  
 Թո՞ղ երկինք բռչեն արեան կարիլներ...

## IV

Մեղուցի՛ր, մորթեցի՛ր ու չը-  
խնայեցիր:

Երև.

Անցորդ—կանգնի՛ր...— քարե՞ր են... քէ՛ լեռ...  
Թէ՞ կարավան է...— շարժերո՞վ բեռներ...  
Ճանապարհի մօս քափուած անխնամ...  
Մօտեցի՛ր... մօտեցի՛ր... տե՛ս, տէ՞ն է փարբամ...  
«Սպասի՛ր, բարեկամ... տէն չէ՛ նիւթեղեն...  
Մարդ է... չի շնչում...— մարդ է նողեղեն...  
Անպետ է դարձել—միս ու պինդ ոսկոր...  
Միսը կրզիայ որբերի որկոր.  
Ոսկորը կրմնայ, ոււտով չի՛ քրիլ,  
Մինչեւ նոր կեանենով վերածնուի երկիր...  
Նրանց—այդ մարդկանց, որ քափել են վար,  
Մորթել են, ինչպես մի խոզ կամ ոչխար  
Եւ այսեղ դիզել... միսը չի ոււտում,  
Որ միսն ուտեին, այլ զազաններին,  
Գիշատիչներին բողել են բաժին:  
Այսեղ ծնւո՞ւմ է... ծեսով սրբազն  
Կնում էն մանուկին, որ աշխարհ եկաւ,  
Այսեղ զարկո՞ւմ են, որպես մի զազան,  
Եւ չունի՛ վրան գերեզմանաբար...  
Ո՞վ զիսէ— հիմա փնջում է որդուն  
Հայրը սրտացաւ, վետալի հայրը,  
«Աղջի՞կ» է կանչում խելազար մայրը...  
Կամ վաղ առաւտօս այսեղ վազելով,  
Լաց ու կականի տիուր երգերով  
Կրծեծուի՛, կո՞ւզի իրեն փեսային  
Մատադահարսը,— իսկ սիրող մի կին  
Միրած դիու մօս կրբանայ իր սիրիմ...

Այսպէ՞ս, յայտնի չէ—դու կա՞ս, կրլինի՞ս,  
Կամ ի՞նչ կրլինիս, երէ դու լինիս...  
Կենդանին ու բոյս տեր են բնութեան  
Խրաւունք ունին, մարդը բանական  
Չունի իրաւունք կեանքի զոյութեան  
Եւ պատապանութեան... Եւ կուզա՞յ մեկ օր.—  
Վիրխարի դեզեր սառ դիակների  
Գյո՞ւիս կրբարձրացնեն իբրեւ լիազօր,  
Եւ ամեն մեկը այդ մարդ—արմասից՝  
Անեղ դատի մէջ՝ Աստրծոյ առաջ՝  
Խրաւունքներն իր բռնաբարուած  
Պիտի պատապանէ—պահանջէ պատիճ...  
Ո՛, մարդ, սոսկացի՛ր ցասումի օրից,  
Ոյդ բիւր—բիւրաւոր սառ զոյիներից,  
Որ պիտի բանան իրանց աչե՞րը,  
Աչերը պաղա՞ծ, խոր ու խոր փորուա՞ծ,  
Իրենց ըրբունքնե՞րը— կտրուա՞ծ, սղոցա՞ծ—  
Իրենց զա՞զն, ուղե՞ղ—մուրենո՞վ ջախջախուած,  
Ոսե՞րն ու ձեռե՞ր—մամուլի տա՞կ դրուած,  
Ու զարկուա՞ծ, նեւուա՞ծ որտերն ու հոգին—  
Պիտի բանան, պիտի բողոքն միասին...  
Ո՛, մարդ, սոսկացի՛ր, խեղդուի՛ր ու լաց,  
Խղճի՞դ, վե՞հ, արդար դատասանի առաջ...

## V

Եւ դու, ո՞վ մերժուած. ի՞նչ պիտի  
Տի ամեն.— Ի՞ն հնմանիներդ հոգին  
Են որոնում:

Տեսնել ժողովուրդ ինե՞ղն, անապահո՞վ  
Անզօր իր հողից հարկերը տալու,  
Անկարող իծնէ ունեցած կորով  
Հոգեպէս, սրտով զործադրելու.

Յանկալ, կամենալ եւ զգալ եռանդ,  
Սակայն եռանդը խեղդամանի, քափուր,  
Աղաչել, խնդրել կեանքով կիսաբանդ—  
Մը ի լղձերը բայբայուած, իզուր...

Արհամառուած են հայրերի անուն,  
Ոտիի տակ տուած շեմբեր սրբութեան,  
Անասունի չափ յարգանի չի տեսնում,  
Եւ մի՛ւս չարատանց, մի՛ւս արիւնաբամ...

Եւ մեծ մարդկութեան գործօն ընթացում—  
Չընքանալ յառաջ—չլինել կտրուկ,  
Ասես, նա պիտի աշխարհի աշխում  
Մնայ միւս կոչուած՝ «եւ մարդ, եւ սորուկ»

Ու կանչէ հոգու տանջանի ժամին,  
Որ Ասուած չկայ այս երկնի տակ—  
Այլ ներսնական արիւնոս համին,  
Աւերմունք ու ցաւ, հանոյք սանձարձակ...

Ասում եմ, հոգիդ կը խաղաղանայ,  
Իմ զո՞ւրի ժողովուրդ, հոգիդ կ'իմանա՞լ,  
Որ նեմառութեան կրբազմի՛ խաչը,  
Եւ կը բայբայուի՛ բռնութեան աջը...

## VI

Այս այն մարդն է, որ երկիրը  
կըսարսեցնէ, աշխարհը անապատ  
կըդարձնէ; Եսայ.

Քսան հոգի ես—զլիսահաւրկ ոսկի,  
Նոր ծնուածներին մեկ-մեկ մեճիրի,  
Պիտի հողին տաս, ջրին, անտառին,  
Խոտին, օրանին—տասանորդ մալին.

Լծիանի հարկ տո՞ւր եւ տո՞ւր կըկանի,  
Աւելի շատ է հարկը զուբանի—  
Ինքդ էլ տուն պահե—չմեռնես խաղցից,  
Ու կուր մղէ՛, պաշտպանուի՛ր վաշխից...  
Մարդու հետ մարդն է վարւում այս տեսակ,  
Ինչպէս չժայ մարդը բեռի տակ,  
Զիայ, մորմորի... որպէս մի գրաս,  
Արիւն—քրինենով աշխատի անհաւ,  
Որ ժամանակին տայ աղալի հարճը,  
Որուուի ապրել—չապրելու հարցը...  
Չտա՞ս—բուրդ աղան, բուրդ բաժիքօզուկ  
Բռնութեամբ կ'առնեն, եւ ո՛չ մի տուկ.  
Վալիի ձեռն է, քրդին է տուել,  
Կապալը կտրել, ինքը փողն առել...  
Դէ՞ն, բո՞ւրդ, բեզ տեսնեմ, բանի ո՛ւժ ես դու,  
Կրէ՛, լաւ կրէ կովկ կարնատու—  
Աշխատող հային... Բայց նա չի՛ մերժել.  
Տարիներ, դարեր շարունակ տուել  
Եւ միւս տախն է այդ բեռնակիրը,  
Հնութեան գրասր, ազգերի ժիր...  
Բայց արդարութիւն... Կը հնչեցնէ, ո՞վ,  
Այդ ուժկու խօսքը տոփող մեծի բով...  
Ո՞վ՝ իլլիզ-Քեռուկի ցոփ պալատների՝  
Կրցնէ ծերպէր հաս-հաս պատերի  
Վէն արդարութեան բարբառով անահ,  
Որ զիւեր—ցերեկ բացազանչէ նա.—  
Մարդն է մի հոգի, մարդն է բանական,  
Այդպէս չի՛ տառում անասունն անզամ,  
Այդպէս չի՛ տառում եւ ողքին զօրեղ  
Ամբողջ աշխարհի բեռներն ուժեղ...  
Այդպէս չի՛ նեռում կուրծքը ովկեանի,  
Հանելով փրփուր, շնչելով բամի...

Սլյդպէս չի՝ սեղմում ոլորտի ուժը  
Ընդարձակ երկրի վիրխարի ուսը...  
Խոկ կեանեում մարդուն բառնալ եւ այդպի՛ս,  
Չքողնել շնչէ, ապրի հոգապէս,  
Չքողնել զգայ եւ վայելէ կեանի,  
Երբ կեանեն և վետի վաղանց ցնորանի...  
Ո՛, ազատութիւն. կրբերե՞ս բերկում,  
Դու ոսիի կ'ելնե՞ս անարդուած երկրում...  
Գիտեմ, դու այնպէս կրծնչես զօրեղ  
Մրտերի համար—անապատ ու նեղ,  
Որ ողջ հողերի անարդար հարկիեր  
Միասին այդպէս երբէ՛ք չեն շնչել,  
Որ երկրի վրայ. դարերի շարեում,  
Այդպէս չե՛ տնչած բարբարոսութիւն:  
Մարդկային կեանեում, իդաերով պէս-պէս,  
Որ տնչած չիմենք վառ խիդճը այդպէս:  
Կրսրափուի՛ մեկ օր խիդճը այդ երկրում,  
Ո՛, ազատութիւն—կրբերե՞ս բերկում...

VII

Բո իշխանները զողերի ընկերներ  
դարձան: Ես.

Մեծ ժողովուրդը խաւարում մնաց,  
Բոնակալորեան խարիսու ռեժիմը  
Խաւարի հօդը բռից միշտ կախուած  
Եւ ասաց՝ «Քո՞դ միշտ կատարուի իմր»...

Մեծ հարկերի տակ շարունակ ննչեց  
Ժողովրդական ուժեղ զանգուածքը,  
Ու սատրապներով չորս դիմ ողողեց —  
Խեղդեցին կամքը, հանեցին այքը:

Հոգեկան սեռութղ, զիտուրին, ուսում  
Միւս ժողովրդից հեռու մնացին,  
Իսկ սատրապները ի՞նչ էին ոզում—  
Կորզել, կեղեմել, կտրել հանց կացին:

Եւ հայրենիքի մեծ հարսուրին  
Չխարենուց երա պէտերի համար,  
Սատրապ—բէկերի որկորն էր մանում—  
Զելքի՛, փառերի՛ եւ արեան համար...

Ահա ամբոխը մի ուժ է սնանկ,  
Նա բարենուած է, աւեր, բարովանդ,  
Ուրագործների առջեւ նա տնանկ,  
Նրա վիճակը՝ «կախաղա՛ն ու քա՞նդ...»

Դուք, զու՞ի չհասցրի՞ք նրան այս օրին,  
Պժալի՛ մեծեր, հականան մանրութիւն.  
Դուք չկ՞իք շարդում խելահաներին,  
Մրի սակ առնում երեխայ, մանկութիւն...

Սեւամած ցինե՛ր, խոփոս ազռաւնե՛ր,  
Մեծ ապագայի առաջն էք առնում,  
Խելագար շան պէս՝ կտրած կապաններ՝  
Դրս լօւսում էք— Երբ կեանի էք Տեսնում...

Զե՞՞ կարող երբեք տանիլ յաղթանակ,  
Բոնի, կոտիս ուժ տեղ տուց ոգուն,  
Եւ նա կընեմէ հոգով փառունակ՝  
Զարուիր, ուր փայտիայն սրսում...

## VIII

Յո երիրդ տերեցիր, ժողովուրդի սպանեցիր: Եսյ.

Հրդեհն է վառուել քո ովկեան երկրի,  
Քո ծով — ուրի մեջ ովկեանի հրդեհ,  
Քո իրաւունից ուժեղը բերկրի  
Եւ բիւր ազգերին նա վարէ, կրք:

Դու երկրի տերն ես, և երկրում բանող,  
Հարկերը դու ես անընդհատ տալիս.  
Քո որդիներն են երկիր պահանջնող —  
Անարդար կռւում առաջ խաղալիս...

Անձայր հողերիդ — ջրերիդ վազման —  
Անզիտակ գործիք որդիիդ են եղած,  
Հրեւ-մեթենան բերել են շարժման՝  
Գոռող հրամանով՝ զոռ կամֆից տեղած...

Սակայն դու չունիս եւ հողի կտոր,  
Ինչդդ եւ զոյիդ տուած բալանի,  
Անձդ անպահապան, կետնիդ՝ մի ժխոր —  
Ուժեղի ձեռքում բող միւս վարանի.

Սակայն դու զուրկ ես և ազատ խօսից,  
Անդար բողոքիդ ուժն է դեմ զախս,  
Նենց դատաւորներ՝ որջերի խորից՝  
«Թիափի՝ կախաղան» հրաման տալիս...

Ո՞վ նրանց տուեց այդպէս իրաւունք,  
Իրաւունքն ո՞ւմն է, ո՞վեր են տերեր,

Պատժուելու են ոճիրներ, զեղծմունիք —  
Կա՞ն ոճրազործներ նրանցից էլ վեր...

Թո՛ղ ժողովուրդի դատասանն արդար  
Սոսկ ոճիրները հանէ՛ կախաղան —  
Նրանց վանդէ զենին ու տարտար,  
Փերեզակներին այդ ամբարտաւան:

Խիդն այն ժամանակ կը հանգստանայ,  
Արդար զայրոյքը կը հանգչի այնժամ,  
Հողը արխենից քեսէ կըտանայ,  
Եւ մարդիկ լինին միմեանց բարեկամ...

## IX

Հունձի ժամանակը անցաւ,  
Ամսուր վեշչացաւ. բայց մենք  
Հիմունանին: Երժ.

Երբ աւետեցին մեզ արշալոյսը  
Եւ — մարդիք դարձան իրաւունիք տեր,  
Նորաբաց կեանիք ըողաւոր յոյսը  
Իրաւունք տուեց աշխարհի դիմել —

Մենք հոգով ուրախ — երգերով ըող-ըող —  
Ասուար խմբերով օրն աւետեցինք,  
Եւ ցնծութեան մեջ, դու եիր, ամբո՞խ,  
Համբուրւում եիր եւ լալիս ինք-զինք...

Ճերմակ աղաւնին վեհ ազատութեան  
Ճախրում եր բարձ՝ մեր զիսի վերեւ,  
Սակայն, ո՛ երազ — օձե՛ր վատութեան —  
Մեր սիրը փո՞ւր — յոյսերս դերե՞ւ...

Ես տեսայ խումբեր՝ լցուած հաւատով,  
Վեն ազատութիւն տօնն էին տօնում,  
Ընկա՞ն իբրեւ զոհ—ընկան փետառով—  
Նողկալի մահով—այդ արեան տօնում...

Եւ երբ բաց ճակատ գլուխն ամբոխի՝  
Ամբիոն վեր ելած—խօսում էր տաֆ-տաֆ—  
Սեւ-մոր ուժերը—դեւերը ոխի  
Կապեցին լեզուն զնակների տակ...

Եւ հոգիս լցուած զայրոյրի քոյնով՝  
Այդ եղբայրասպան ու զագիր կուտում—  
Ահա զեւ ցի՞նն է դժոխի զոյնով,  
Ահա զեւ ցի՞նն է վերս կուտում...

Անա՛րդ, վատաշուեր պատկերի դիմաց  
Մաղձով, լեղիով լցուեց իմ հոգին,  
Ո՛, մեծ ժողովուրդ, զոհերդ տեսած—  
Սաացի՝ «ո՛ւժ ես եւ դո՛ւ ես ոզին...»

Դու պիտի զնաս յառա՞ջ—մինչեւ վե՛րջ,  
Այլեւս չկա՞յ պատուար մեզ համար,  
Դժոխի ուժից դու չե՞ս մնալ զերծ,  
Սակայն կը յարի՛ս, կրկապե՞ս կամար...

## ԿԵԱՆՔԻ ԱԼԻՔՆԵՐ

## I

Ես ա'յն մարդն եմ, որ սառա-  
պանի տեսայ. ինձ սարսւ խռութի  
մէջ եւ ո՛չ թէ լոյսի մէջ։ Երժ.

## I

Երազիս տեսայ—սեւ-սեւ ագռաւը  
Փորում էր սիրսу...  
Շունչս կտրուած... ես արիւնաբամ—  
Եկել էր վերջու...  
Տեղիցս քուայ՝ „Մայրիկ, ա՛խ, մայր իմ,  
Զէ՞ որ մեռնո՞ւմ եմ...  
Սեւ-սեւ ագռաւը դադար չի տալիս—  
Սասի՞կ տանջուում եմ...»  
—Սի՞րտ է յուզուած... Որդի՞ս, հանդարդուիր—  
Շո՞ւտ կըլուսանայ.  
Չա՛ր երազներից՝ չաշարուած հոգիդ  
Կը հանգստանա՞յ...

## II

Երազիս տեսայ—սե՛ւ, մքի՞ն զիւեր,  
Աստիեր հանգած.  
Իմ կրծքի վրայ վհուկ էր չոնել,  
Խեղդում էր կամաց...

Արպէս խելազար կամբնում էի  
Կտրատել կտպս,  
Անսիրս պառաւը ուժով կրանի  
Կտրում էր բափս...  
«Ա՞յս, մայրիկ... ո՛ւժս, ո՛ւժս ջլատեց  
Անսիրս վիռոկը...»  
Ու դուրս ցատկեցի—մուր գիշերուայ մեջ  
Լալու իմ սուզքր...  
—Մի՛ գնար, որդի՛ս, սփոր երազներ  
Կ'անցնին վաղ՝ թէ ուշ—  
Տե՛ս, հեռո՛ւն... հեռո՛ւն...—սկսեց զարբնել  
Գարնան առաջոյս...

III

Նեազիս տեսայ—անուշ նազելիս  
    Նստած լալիս եր.  
Աղքա՞ս, ոքրոքիկ, մազերը ցրի,  
    Լալիս եր անտեր...  
«ԱՇԽ, ի՞նչ պատահեց—իմ հոգուս ուժը,  
    Անուշ նազելիս,  
ԱՇԽ, ի՞նչ պատահեց—դու ոռպէս գոյժը  
    Աւրում ես հոգիս...»  
—ԱՇԽ, որդիներս... մեր հոյր, եղբայրը  
    Ցիր ու ցան եղան...  
ԱՇԽ, մեր տուն—տեղը, մեր հայրն ու մայրը  
    Ուր են, ի՞նչ եղան...  
Իմ քանից զարդերը—որ տուիր նուեր,  
    Խելել տարել են...  
Ինչո՞ւ բողեցիր սիրելուդ անտեր—  
    Թալանեն, այեն...  
«Մի՛ լար, նազելիս, իմ հոգուս հոգին,  
    Իմ սրտիս ուժը—

Քոնն եմ յաւիտեան...—Քոնն են, պիրելի՛ս,  
իմ, ձեռքը, ուսը.  
Նժոյզս նուած՝ կ'անցնեմ աշխարհի  
Կայծակի նման,  
Քո ինչը, զոյքը... ամբովզ աւարք  
Կ'առնեմ յետ կուզամ...»

II

Անցող, զմա՞ ասա սպարտացի-  
ներին, որ մենք բազուցինք այս-  
տեղ, իրանց հրամանները կատար-  
ուի համար... Մի.

Ընկեր, բարեկամ —զնում ես, իմացն ւր  
Այսեղ հեռաւոր մեր եղարթերին,  
Որ ունեցածներս տալով տիտուր—  
Ընկանք, շարդուեցին բայրս միասին.

Եւ այն դաշերում, ուր մի ժամանակ  
Գուրանն էր սեփակով հողերը նելիում,  
Ուր արօք նո՞յն — կա՞թ բխում առաս,  
Մեյր իշնում երկնից —արտեր զօդում.

Եւ լեռան վրայ լուսնակ զիշերին—  
Մանկիներ՝ քառեր արածացնելով  
Հնչեցնում եին սրբնզն ու ըուին,  
Մեղմիկ երգերի արձազանի տալով.

Ուր ծառասանում—նոխ այգեստան մէջ  
Հոսում էր կարմիր ու անուշ զինին,  
Պատեր ու երգեր կես—զիշերուայ մէջ  
Հնիշեցնում էին մեր պապերը հին.—

Կարմիր արք' ւն է այնտեղ հիմա հոսում,  
Դիակների վրայ ցին, ազռաւ իջել,  
Նրանց ձայները—խոփոս ու տրում—  
Խեղդում են մեռնողի վերջին հոգոցներ...

Եղբա՛յր, բարեկամ...—կողիս վերբն է խոր,  
Չի՛ անցնել մի ժամ—դու դեռ չհասած  
Հեռուն երեցող սարսափների ձոր—  
Կ'աւանդե՛մ հոգիս...—բայց վկա՛յ Աստուած—

Սևս՝ չբողնեն մեզ աճօգնական,  
Մեր տուն, ընտանիք—անսկր, անպատճան.  
Օստի ձեռում...—տանե՛ն, անպատճե՛ն,  
Մեր դիակների վրայ կախաւեն...

Բարեկա՛մ, հաւատա՛... օրհասիս ժամին,  
Երբ կեանքն ախործ է ամենի համար.  
Ապրել թէպէս եւ մի պահիկ շնչին,  
Թէպէս ցաւերով—անսկր, ուժասպան...

Ես տանջրում եմ... բո՛տն փափազով,  
Ապրելու ու՛ր կրծիս սեղմելով,  
Ես տանջրում եմ, որ բաժանում եմ,  
Բայց հոգով երեւում—կուռ' մ մեռնում եմ...

Մարտնչե՛լ, տանջուե՛լ, կեա՛ն սիրել, մեռնե՛լ—  
Հոգեկան տե՛նչ է. աշխարհն աւեր  
Կրիերածնուի՛, տանջանքներից նոր  
Գուլիք սերնդին կըքացուի նոր օ՛ր...

Եւ անմեղների արդար արիւնը  
Կարմի՛ր, լս' յն շերտով զծելով երկիր—  
Կրմնայ անջինջ... Մտի՛ր մեր տունը,  
Ասա՛ «նա գնաց հեռաւոր երկիր...»

### III

—Զա՛ն աղջիկ, հա՛յ աղջիկ...  
Հովն է տրում լեռան լանջ,  
Լուսնակ զիշեր. ուռ կանչ.  
Ելար ձո՛րը զնացիր,  
Զուլալ, պաղ զո՛ւր բերեցիր—  
Աղջի՛ ջան, անվախ ջան,  
Արիւն—վերբն լուացիր...

Խոս ու ծաղիկ բաղեցիր,  
Խորոնկ վերբն կապեցիր.  
Խորոնկ վերբն չըմրե՛ց,  
Իմ արիւն չկապուե՛ց—  
Աղջի՛ ջան, բուրի՛կ ջան,  
Սո՛ւր եր խրուել սրիս մեջ...

—Հե՛յ աղջիկ, հա՛յ աղջիկ...  
Սփոփեցիր իմ կոկիծ  
Եւ իմ սրիս խոր բախիծ.  
Ասիր՝ «Ալսակ՛ր, ե՛լ ապրիր».  
Ասիր՝ «Բուրի՛կ, մի՛ ասիր.  
Յոյս չկա՛յ... ուռնչ չկա՛յ...  
Բուրի՛կ ջան, մի՛ ասիր...—

Խո՛ր եր խրուել սրիս մեջ  
Իմ բժնամուս սուրը մեծ—  
Քաշեցիր, դուրս հանեցիր...  
Քամուեց արիւնն իմ սրից.  
Աղջի՛ ջան, անմեղ ջան,  
Ես հանգա՛յ—դու մնացի՛ր...

— Հալա՞լ է, աշխա՞րհ է...  
Թաղումեց մարմինս հողում  
Հանգստացայ, բնեցայ.  
Բայց չենց իմ արին—  
Հոսո՞ւմ է, նիմա կա՞յ.  
Աղջի՞ ջան, վերս խոր  
Չըմրեց—սրափուե՞ց...

Եկաւ ընկաւ ու սիրսը  
Իմ վառ վերք—իմ վիշք,  
Իմ թշնամիս ենք համար  
Վիշտ դարձաւ անդադար.  
Սացիր՝ «Դու բնի՛ր,  
Ընկե՛ր ջան, բարեկա՞մ...»:

— Ջա՞ն աղջիկ, հայ աղջիկ...  
Հովն է շրջում լեռան լանջ,  
Լուսնակ զիւեր ւու կանչ.  
Տաք արտասուր բափեցիր,  
Պաղ շիրիմս ցօնեցիր,  
Աղջի՞ ջան, ու վրան  
Իմ գեներս կախեցի՛ր...

#### IV

— Բա՛րեւ, ո՞րտեղից... Զմեռուան օրը,  
Երբ արար-աշխարհ իր բունն է մտել,  
Տկլո՞ր ես... Բաց են ու կուրծին ու փորը,  
Ուերդ բորիկ ու դեմքդ մքնել...

— Բաղեռու կողմին — գեղերուց կուզանի,  
Չեան, սառցի միջով... այնտեղ, ուր անուշ  
Հովե՛ր ու ջրե՛ր, արօս անդասան,  
Սուրբ Կարապիսու վանի, ուր իջած է կոյս...

— Օտարական եմ, հայ եմ եկաւոր,  
Ապահով օրեն հասել եմ այս օր...  
— Դու երկրից կուզաս — ուր իջած է կոյս,  
Ուր անուշ ջրեր, հովերի օրօր...

Բայց ու հագուստդ, ու դեմքդ մոլոր,  
Չայնդ անվասան, ու վախկոս հայեր  
Այդպէս չեն ասում — կեղծում ես, եկո՞ր,  
Դու ասա՛ իսկը — ո՞րդից ես եկել...

— Ես բերի երկեն, ուր կարն է բխում,  
Ուր մեղր է իջնում երկնից ցողու հետ,  
Ուր բարի սակենոսկի է ելնում,  
Արեւը վառ-վառ, ասդերը բդէտ:

Ամառուան օրեր՝ բիբեռ գոյնզգոյն  
Ծաղկունին են պագնում բեւ-բեւի տուած,  
Վերջ չունի՛ այնտեղ ծաղկաւոնց գարուն...  
— Ես չե՞մ հաւատում, դու կրլինիս խաբուած...

— Դու չե՞ս հաւատում. — ջրերի միջնին  
Ուկի ձկներն են, ուկի ասդներ,  
Հաւերու երգեր անպակաս մեզնեն,  
Կապոյս երկնին չկա՞ն մութ ամաեր...

— Երէ այդպէս է — այդ դրախտի միջից  
Ինչո՞ւ դուրս եկաւ այս ձմռան միջոց

Սառոյց կրիսելով,—ընկել ես ուժից...  
Մոլորուա՞ծ, անյո՞յս... ու չունիս ծածկոց...

Չանձացա՞ր պատեղ...—Զե՞, այդպէս չեղաւ—  
Դրախտի երկիրը բողեցի եկայ,  
Քանի որ սրհս մեջ դրախտը աւրուաւ...  
Ե՞լ ապրել չեղաւ...—Դէ՞ն, այդպէս ասա՞:

## V

—Դու ի՞նչպէս հասար այսեղ ողջ, արի,  
Կնօջ որդոցդ հետ սարսափի միջից—  
Երբ, ինչպէս գլուխներ հաւի ձագերի,  
Թռչում եին գլուխներ մարդկանց վզերից:—  
—Ի՞նչպէս... պահապանն երբ մեզ նկատեց,  
Առաջներս առաւ—փոքրիկիս կապեցի  
Կնօջ մեջքեն—ծծկերը գրկի մեջ—  
Միւսի ձեռքեն աղջիկս բռնեց:  
Ուզեցինք բուրդի գիւղեն փախուս տանի...  
Բայց շրոդեցին... Ապրի՝ մենիրիեն—  
Բաց բողին կնկտոց—կնկտոց հետ խիս չեն,  
Մեզ ել կապեցին ու «տուսաղ» տարան:  
Մի մուր գիշեր եր, պահապանը մեր  
Քնին եր տարուել—մենի փախանք գիւղեն,  
Մի պտոյ արինք եւ ընկանի նորեն  
Առաջուայ համբեն... Մի մուր գիշեր եր...  
—Բայց ընտանիներդ ո՞րտեղ մնացին,  
Երբ ձեզ բռնեցին:—Հայոց մեկ գիւղ կար,  
Այնտեղ պահ մտած սպասում եին,  
Խսկ փոքրիկ տղաս իր փախեն կուլար...

—Բոլորդ հասա՞՞ք:— Սահմանն անցնելիս  
Չահել աղջիկս մեր ձեռքը չընկաւ,  
Չգիտենք ի՞նչ եղաւ—մուքը ընկնելիս,  
Երբ կամուրջի բոլ հրացանը պայրաւ...  
Արին ու քրինք մտել եր իմ կին.  
Նրեխան շալկած—գրկին ծծկերը—  
Խսկ փոքրս մեռաւ. մեր համբի կիսին.  
Զկրցաւ փախչել, բռնուան ոսեերը...  
—Ապա ի՞նչ արիք:—Գետնի վրայ չոխան,  
Աղաչեցինք, խնդրուանի—նա՛ր, հնար չեղաւ...  
Ուկի՞ հանեցի... բողինք ու անցանի...  
Բան ել չմնաց... եղածը եղա՞ւ...—  
—Ուկին ո՞րտեղից...—Մեծ, տես տուն եինք—  
Զրադա՞ց, արօ՛ս, կով ու մալ լծու—  
Թողինք ու եկանի մեր զան ու քրինք,  
Մեր աշխատանիներ...— Ափսոս չեր, ինչո՞ւ...

## VI

Պահապանները զատկական գիշեր,  
Երբ անհոգ եին կերաւիսումի մեջ—  
Քուրցի մեջ կծկուած, ոսներս չուստեր,  
Անցանք սահմանը: Գիշե՞ր եր անվերջ...  
Զի՞ւն եր չորս կողմբ եւ ցուրտ եր սասիկ...  
Պիտի հասնեինք՝ մինչեւ լուսաբաց՝  
Հայոց մօս-գիւղը... Զըգիտենք ի՞նչպէս—  
Ճամբեն կորցրինք, քե դեւը կոխսեց...  
Գնացինք, զնացինք—չհասանք գիւղը:  
—Արի՝ բաժանուենք—ասի ընկերիս,  
Ազ կ'երամ—դու ձախս—կրգսնենք գիւղը...  
Ազատուեցի ես, բայց վայ իմ սրիս...

— Ի՞նչ է պատահել խօսում ես այդպէս...—  
 — Ընկերս՝ սիրը կրակով վառուած՝  
 Շա եր ման եկել — զիւղը չեր գտել,  
 Յոզբած ու քաղցած եւ յօյսը կտրած...  
 Լեզուս չի դառնում մնացածը ատեմ:  
 Ափոն՝ ընկերս, ընկե՛րս սիրած...  
 — Ի՞նչ է պատահել...— ընկերս եր ստոե՛լ,  
 Երբ տողն արեւի նոր եր երեցած...  
 Երբ պահապանը տեսել եր դիակ—  
 Դզգուած թղթեր տեսել եր մօր...  
 — Թղթե՛ր— զզզզուած. ինչո՞ւ փոխանակ...  
 — Ո՞վ զիտէ, քաղցի կրծել է բուղը,  
 Կամ կամեցել է, որ իրանից յետ  
 Զմիայ բուղը... Գիտե՞ս, ա՞յդպէս ե...  
 — Ի՞նչ զիտէմ, ուղի՞ղ, փոխուած, քայխոյուած  
 Դիմ նանաշել են... թէկուզ զարկել են...  
 Եւ կասկած չկայ, որ այդպէս լինի:  
 Կը խոստովանուի՝ պահապանը այդ...  
 Զղում եմ բողի ընկերիս մենակ,  
 Ես ել ողջ դարձայ— տեսնում ես ելի  
 Առաջդ կանգնած...— Զարմանալի՛ է այդ:—

## VII

— Օրհնուած պապերիդ, խէ՛րով հայրերիդ  
 Անունով խօսիմ— մեզի տեղ ցոյց տո՛ւր...  
 Դոմ լինի, ախոռ կամ թէ նացի փուռ—  
 Գիշերն անցնենք... ոսքերս ցրից  
 Եւ շատ քայլելուց չենի կարող շարժել...  
 — Վաղո՞ւց եֆ եկել:— Ահա, նոր մասն մենի այս  
 Քաղաքը.

Անձանօք բաղաք...— Ընտանիքով կ՞ի:  
 — Ո՞չ, երիկ մարդ ենք...— Ո՞ւր եֆ զնալու:  
 — Հայրիկին կ'ե՛րանք վաղ առաւօսուն.  
 Տեսնենք ի՞նչ կ'անենք. ամեն բան տեսանք,  
 ել բան չմնաց աշխարհի վերայ, որ չտեսնեինք...  
 — Վ.րքո՛, դէ՞ն, ժելէ, մի կայնիր, ժելէ...  
 Մի անկիւն նարենք.— Արի իրար նես—  
 Մեր տունը բնեկ... Գնալու եֆ յե՞ս,  
 Թէ գործ չգտնենք, բախտը չբերէ...  
 — Բախտն ել ի՞նչ բերէ, բերածը բերեց...  
 Աշխարհի վրայ ել բան չըողեց,  
 Որ մեզի համար բախտը չբերէ...—  
 Երկու թեւ, զոյգ ոսք, աչք, ժիր ու բերան—  
 Բայց թե՛ւդ անզործ, ոսքե՛րդ անշարժ,  
 Աշքե՛րդ անլոյս, ժի՛րդ բոնուած...  
 Բե՛րանդ անհաշակ... զլուխդ անխորհուրդ...  
 Անընկեր տարա՞կ, ոչխա՞ր մոլորուած...  
 Այնպէս ել մենի ենի...— Ապա՛, արի մօս.  
 Նո՞ր է այս վերեդ:— Ճին է իմ վերս,  
 Բայց նորոգուեցաւ, երբ որտիս ցաւից  
 Դաղարս կտրա՞ւ, թշնամու որից  
 Բացուեցաւ վերս, կորա՞ւ իմ խելխս...—  
 — Այնտեղ հացն առա՞ս է, երկա՞ր է ձմեռը,  
 Մարդիկ ի՞նչպէս են, խղճո՞վ են, սիրով...  
 Հա՞յ, տո՞ւն, ընտանիք այնտեղ ունիի՞ֆ:—  
 — Ունենինք, այս՛, բայց նիմա չունենի:

### VIII

Վերքս... վերքս տաս խորունկ է, եղբայր,  
Կսկիծ չկայ այսպէս, ցաւ չկայ այսպէս:  
Չեռքդ դի՛ր...—բայց դու չե՛ս կարող զգալ...  
Մարմինը չե՛ս, աշխարհը, հոգին է այդպէս...

Բարեկամ, սարսափ չե՛ կարմիր արիւնը կրծքիս,  
Որ դուրս է բխում—կը մեռնի՛, զիտեմ...  
Սարսափ է աշխարհը... եւ երա խաղը,  
Աշխարհը չի՛ մեռնի—յաւիտեան է աշխարհը...

Ա՛յս, բարեկամ... ուրջդ նայի՛ր... սե՛ս, տես բոշուններ...  
Տե՛ս վայրի երե... կամ նապասակներ... որսից յետոյ  
Թափուած իրար վրայ...—վիրաւո՛ր.. խոցն՝ ս.. ալլանդա՞կ...  
Մարդի՛ք են...—Մարդի՞ք... ո՞րքան... ե՞րբ... ինչո՞ւ...

—Մարդի՛ք են. մի՛ զգար, մի՛ ցոյց տար, որ ցաւում ես,  
Զապի՞ր զգացմունիդ, ներս բաշի՛ր լեզուդ, խեղդէ ար-  
տասուդ...  
Քա՞ր դարձիր, փայտ դարձիր—կպի՞ր տեղդ...  
Ո՛չ մի՛ ձայն...—հօսե՞ր են, հօսե՞ր են... անսունների  
հօսե՞ր են...

Մա՞դր է, բարեկամ, ծա՞դր... հեզնուրի՛ւն... զուարնալի  
խա՞ն—  
Զուարնալի բակարդ—բոշո՞ւն, մո՞ւկ թիրեռ որսալու...  
Ի՞նչպէս չընկնես... զուարնալի բակարդ առջեւդ դրած.  
Կարո՞ն էս զապել—նախատեսնել բռնկման ժամանակ...

Ո՛չ մի՛ ձայն. ամօրից մեռնում եմ. ամօրից հող դարձայ...  
Երբ մեռն արդար ու վեհ իդձերով լցուած՝  
Մեր պատիր—իրաւունքը ուզեցին պատասանել...—  
Թակարդ դրին—հիանալի՛, սմանչելի՛ բակարդ—  
Միամիտ, անզլուխ ու աղբատ ժողովրդի համար...

Ա՛յս, բնկեր, վերքս... վերքս տաս մեծ է, խորունկ,  
Կը մեռնեմ—իա չի՛ մեռնի, կը մնայ աշխարհում—  
Սպազայում նորանոր բողբոշներ արձակած՝  
Կը ուղայ—կ'ուռնանայ սրեւրում կենդանի՛,  
Սրեւրում արեւոս.—ծաղիկս կրբացուի՛, վերքս կրծաղկի՛...  
Շուրջդ նայի՛ր, կծկուիր, ալլակերպուի՛ր... մի՛ երեւար,  
ամօ՛ք ե...  
Հօ՛սեր են—մարդիկ չեն... բռչուն, մուկ, նապասակ,  
երե...

Ել լեզու չի դառնում... ցամաքո՞ւմ ե... մնաս բարեա՞ւ...  
Հոգի՞ն, հոգի՞ն... վերքս կը մնայ... կը մնայ...  
Սարսափների՛, արիւնների՛, դիակների՛ զոլորշիները  
Աշխարհի մէջ, սիեզերում բափառելո՞ւ են, բափա-  
ռելո՞ւ են...  
Քրերը, կոկորդները պիտի լցնեն, պիտի խփեն  
Այդ իմ խորունկ վերքս զոլորշիները...  
Մինչեւ սարսափի՛, մինչեւ ցնցուի՛ աշխարհը բնեած...  
Մարմինս չի՛ ցաւում...—կուզե՞ս ման զամ...—  
Վերքս, բարեկամ, խորունկ վերքս... խորունկ վերքս...

## IX

Երեկ եկաւ՝ ևսօր զնաց...—սրտեռուս մեջ բան չմնաց.  
Ես աշխարհի կարգերն ի՞նչ եմ,—տներուս մեջ բան չմնաց.  
Թէ որ խելքդ զլիսիդ մարդ ես—ես աշխարհի օրենքն ի՞նչ է  
ևսօր տեսած—եգուց կարօս, ես աշխարհի օրենքն ի՞նչ է:

Ժեռի վրայ՝ սարի ծերին հաւք է նսած ամպերի մեջ,  
Դնավակ դիպաւ—հաւքն ընկաւ, ժեռի վրայ հաւք չմնաց...  
Բաղի միջին՝ ծառի վրայ կարմիր դեղձն է արեւի տակ,  
Կարկուտն եկաւ, ծառին զարկեց—կարմիր դեղձն էլ չմնաց:

Ես աշխարհը խելքի բան չեմ—ևսօր եղար՝ եգուց չկաս.  
Մարդ ես, կուռի կ'երբաս—խաբար կուգայ, որ ել կա՞ս.  
Ես աշխարհը չարի բուն է, մարդ արեւին կարօս է միշտ,  
Բերախս եկար՝ բերախս կ'երբաս, լու օրերուն կարօս  
կ'երբաս...

Ա՞յս, դառն օրը տանելի է, չաշշարանն էլ խելքի բան է,  
Թէ արեւդ մերը մտնի, սիրտ կոտրի—կեանքն ի՞նչ բան է.  
Ընկե՛ր-մարդիք, ցաւս շատ է... տունս, բունս դասարկ  
մնաց,  
Հօվարդի պէս ման եմ զալիս... ա՞յս, եղածից բան չմնաց...

Երկնքի պէս իստակ եղիր—հողիդ զուլալ հանց աղբեր-ջուր  
Դու հեռու չես նենգաւորից,—օձերն իրենց կրբափեն  
ըոյն...  
Ել, մարդ-ինսան, դա's կրփնդուս, ալեւ աշխարհ կ'եր-  
բաս անյոյս,  
Սրեւն երբ որ մերը մտաւ—ե՞րբ կրզարբնի տող-արշալոյս...

## X

Ա՞յս, ընկեր մարդիք բռան, զնացին,  
Ես մորու նման մենակ եմ եստեղ,  
Բները բանդուան, դասարկ մնացին,  
Ել ո՞ւր եմ ես ել մնացել եստեղ:

Այրուած շենքերու մի բռ եմ դարձել,  
Նրանի զնացին ու սիրս տարան,  
Ես ի՞նչպէս մնամ անսիրս ու անսեր,  
Նրանի զնացին ու սիրս տարան:

Ու կ'աշեմ մենակ զուլում աշխարհին,  
Կ'աշեմ ու կուլամ իմ զարզանդ վերեն,  
Օչախի նման կլմխայ հողիս  
Ես կրակ ու բոց զուլում աշխարհին:

Ա՞յս, ընկեր-մարդիք բռու ու մառ եղան,  
Ու ես աշխարհիք նեղ դարձաւ մեզի,  
Սիրս է արիւնե՛լ, ասդերս մարան,  
Ու ես աշխարհիք բեռ դառաւ մեզի...

## ՑԱՆԿ

ԵՐԵՒ

Յիւսուսկին . . . . .	3
----------------------	---

## ՄՈՀՈՒԾՆ ՍՏՈՒԵՐՆԵՐ

* Ալա, արուճ-խամի՛	7
* Մուայլ է նոզիս	8
* Ճանապարհորդք օտագում է տուն	9—10
ևս տեսայ տունը	11
* Զոների ձայները	12—13
Խոր, սաստիկ ձմեռ	14

## ՎԵՐԱԶԱՐԹՆՈՒՄԻ ՏՐՏՈՒՆՉՆԵՐ

* Կոչ . . . . .	17
* Երբ արտանիմիկ . . . . .	18
* Դու կուղե՞ս տեսնել . . . . .	19—20
* Մի՛ զոռար . . . . .	21
* Անցո՞րդ, կանգնիր . . . . .	22
Տեսնել մողովարդ . . . . .	23
Քանի նոզի ևս . . . . .	24—25
Մեծ մողովարդը . . . . .	26—27
Հրդեմ է վառուել . . . . .	28
Երբ աւետեցին . . . . .	29—30

## ԿԵՐՆՔԻ ԱԼԻՔՆԵՐ

Երազիս տեսայ . . . . .	33—34
* Բնելե՛ր, բարեկամ . . . . .	35—36
Զան, աղջի՛կ . . . . .	37
Բա՛րեւ, արտեղի՞ց . . . . .	38—39
—Գու, ի՞նչպէս հասար . . . . .	40
Պահապահները . . . . .	41
Օրինած պապերին . . . . .	42—43
Վէ՛րիս... վէ՛րիս . . . . .	44—45
Երեկ եկաւ, եսօս զնաց . . . . .	46
Ա՞յս, ընկեր մարդիք . . . . .	47

**Փանօթ.** Աստղանիշերով նշանակուած ուսմասութեր սպառած  
են եղել „Լուսայ“ և „Արշարոյն“ թերթեռում, միւսներ առաջին տի-  
գամ են լսու տեսմում:



ՀՀ Ազգային գրադարան



NL0345473

36505

ԳԻՆՆ Է 30 ԿՐՊ.

Լոյն 1. առևէ նոյն մելինուի  
օլորովի վեցհազմելից և ժաղավազարս կհանիլից. 1896:

Մասնաւոր առք 1.  
Առանձնագույն և պատճենագույն (բանակադրություններ):

Մախուռմ և գրավածաւոնցներում: